

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սիմոն Կրկյաշարյան
Հայաստան

Հիրավի ընդունված է, որ Հայաստանի հին պատմության ուսումնասիրման գործում դժվար է գերազանահատել անտիկ պատմիչների Հայաստանին վերաբերող հաղորդումները, մասնավորապես նրանք հաճախ եզակի են, ուստի և անփոխարինելի: Հասկանալի է, որ այդ հեղինակների առանձին հաղորդումների ճշգրիտ թարգմանությունը և մեկնությունը հատուկ կարևորություն ունեն հայագետներին համար: Շուրջ կես դար հույն պատմիչների երկերը հայերեն թարգմանելու գործով զբաղվելիս գոյություն ունեցող թարգմանությունների և դրանց մեկնությունների մեջ մենք նկատել ենք մի շարք անճշտություններ: Առաջարկվող զեկույցը նվիրված է Հայաստանին վերաբերող Հերոդոտոսի, Քսենոփոնի և Ստրաբոնի մի քանի հաղորդումներին միայն:

1. Հերոդոտոսը պատմում է, որ ասորեստանցիները Եփրատ գետի վրայով Հայաստանից փոխադրում էին «Βίκους φοινικίους ... οἶνου πλέους»¹:

Կարծում ենք, որ ակադ. Գ.Յ.Մանանդյանը ոչ ճիշտ է մեկնաբանել «Βίκους φοινικίους ... οἶνου πλέους» բառերը, թարգմանելով «զհինով լիքը արմավենի տակառներ»²: Նա «Βίκους» բառը թարգմանել է «տակառ»: Տվյալ դեպքում նրան, հավանաբար, շփոթեցրել է «φοινικίους» ածականը: Սակայն հունարեն «Thesaurus Linguae graecae» բառարանում Βίκος հիմնականում նշանակում է կավե աման, փարջ, նաև կարաս: Հետագայում ապակյա սափորիկները ևս կոչվել են Βίκον, որը Βίκος բառի նվազականն է: Հունական մեծ հանրագիտարանը ևս, վկայակոչելով Հերոդոտոսի նույն այս հատվածը, նշում է, որ Βίκος նշանակում է թրծված կավե խոշոր անոթ, որը հնում օգտագործել են զինի և այլ հեղուկներ պահելու համար³: Մեր ձեռքի տակ եղած բոլոր բառարանների տվյալների հիման վրա եզրակացնում ենք, որ Βίκος բառը չէր կարող նշանակել տակառ, այլ բացառապես «կավե անոթ»:

Ինչ վերաբերում է φοινικίους ածականին, ապա այստեղ այն նշանակում է ոչ թե «արմավենի», այլ «կարմիր», ինչպիսի նշանակությամբ այն հաճախ օգտագործել են Հոմերոսը (φοινικόεις)⁴ և Քսենոփոնը (φοινικεύς)⁵: Հետևաբար, Հերոդոտոսը խոսում է ոչ թե արմավենուց պատրաստած տակառների, այլ կարմիր կարասների մասին: Նույնը ժամանակին նկատել է նաև Ջ.Մ.Ղաթաբաջյանը⁶:

Նշված տեքստը վերցված է Teubner-ի հրատարակությունից: Հերոդոտոսի մեկ այլ հրատարակության մեջ (Fridericus Palm, Lipsiae, 1839) կա ոչ մեծ մի տարբերություն՝ պակասում է φοινικίους բառի վերջին չ-ը, ուստի տվյալ բառը դրված է ոչ թե հոգնակի հայցական հոլովով և վերաբերում է ոչ թե Βίκους բառին, այլ դրված է եզակի սեռականով և վերաբերում է οἶνου բառին (Βίκους φοινικίου ... οἶνου πλέους):

Այս դեպքում ևս φοινικίου բառն ավելի շուտ կնշանակի «կարմիր», քան թե «արմավենի»: Ակներև է, որ այդ զինին պատրաստում էին Հայաստանում մշակվող լավագույն խաղողից, որի առատ բերքի մասին բազմիցս հաղորդում է Ստրաբոնը⁷:

2. Նույն Հերոդոտոսը (XII, 79) պատմում է, թե Հունաստան արշաված պարսից զորքերի կազմում եղած արմեններին և փոյուզներին «առաջնորդում էր Արտոքմեսը (ΑΡΤΟΧΜΗΣ), որն ամուսնացել էր Դարեհի դստեր հետ»⁸: Մենք ենթադրում ենք, որ մեզ հասած ΑΡΤΟΧΜΗΣ ձևը Արտաշես (ΑΡΤΑΞΗΣ) անվան աղավաղումն է: Մեզ հավանական է թվում, որ ΑΡΤΟΧΜΗΣ անվան M տառը պիտի լիներ Σ:

Հնում կարող էին գրիչները հեշտությամբ շփոթել դրանք, մասնավորապես որ հույն գրության նախնական շրջանում Σ տառը գրվել է նաև M ձևով⁹: Եթե այդպես է, ապա կունենանք հետևյալ հավանական անցումը՝ ΑΡΤΟΧΜΗΣ-ΑΡΤΟΧΣΗΣ-ΑΡΤΟΞΗΣ-ΑΡΤΑΞΗΣ: Ինչպես մեզ թվում է, հանձին այդ անունը կրողի, մենք կարող ենք տեսնել Արտաշեսի հիշատակում ներկայացուցիչներից մեկին, որը կառավարել է Հայաստանում Ք.ա. VI դարում, թեև հայագետներն այդ իշխանատոհմը ցարդ անվանում են Երվանդյան:

3. Մեր այս կարծիքին համահունչ է Քսենոփոն Աթենացու մի ուշագրավ վկայությունը: Իր «Անաբասիս» հանրահայտ երկում հույն պատմիչը Հայաստանի սատրապ Օրոնտասի կողքին հիշատակում է նաև զորապետ Արտուքասին (ΑΡΤΟΥΧΑΣ): Մեզ թվում է, թե 'Αρτούχας և Արտաշես անունները ևս նույնական են հետևյալ նկատառումներով:

Քննարկվող ժամանակաշրջանի հատուկ անունների մեջ հայկական լեռնաշխարհի համար սովորական է եղել ու-ա հնչյունափոխությունը (Ուրմե-Արմե, Ուրարտու-Արարատ, Էրեբունի-Երևան): Ուրեմն, 'Αρτούχας անվանաձևից ստացվում է 'Αρτάχας ձևը: Այնուհետև՝ հույները χ (խ, հնում՝ ք) տառը արտասանում են փափուկ ծայրավորից առաջ հայերեն շ բաղաձայնին մոտ (χίων, χεϊμών, χείρ): Պատահական չէ, որ եվրոպական առանձին լեզուներում (օր. ֆրանսերենում) հունարենից փոխառնված բառերում «չ» տառը տառադարձվում է ch-ով (μηχανή - machine, χαρακτήρ - character, χάσμα - charm)¹⁰:

Ինչ վերաբերում է 'Αρτούχας անվան -ας (աս) վերջավորության, ապա այն հունարենում բացառապես նույնական է -ης (-ես) վերջավորության հետ: Հետևաբար, Քսենոփոնի հիշատակած 'Αρτούχας անունը լիովին նույնանում է Արտաշես անվան հետ: Այսպիսով, առաջադրում ենք այն վարկածը, թե Ք.ա VI-V դդ. Հայաստանում իշխած արքայատոհմը ոչ թե Երվանդյան էր, այլ Արտաշեսյան¹¹:

4. Տարակարծություն կա «Անաբասիսի» հետևյալ հատվածի թարգմանության ու մեկնաբանության առիթով. «ἦσαν δ' οὗτοι Ὀρόντα καὶ Ἀρτούχα Ἀρμένιοι καὶ Μάρδοι καὶ Χαλδαῖοι μισθοφόροι»¹²: Տվյալ նախադասության կառուցվածքից պարզ չի դառնում, թե արդյո՞ք բոլորը և՛ հայերը, և՛ մարդերը, և՛ խալդայները վարձկաններ էին: Թ՞ե «վարձկաններ» բառը վերաբերում է միայն խալդայներին, կամ մարդերին ու խալդայներին միասին: Մ.Ի.Մաքսիմովայի թարգմանությամբ¹³, բոլորը, անգամ հայերը, վարձկաններ էին, իսկ այլ թարգմանություններով այնքան էլ պարզ չէ այդ: Յ.Մարկվարտը և Գ.Տիրացյանը¹⁴ ենթադրում են, որ «վարձկաններ» բառը վերաբերում է խալդայներին և մարդերին: Գ.Յ.Մանանդյանը խալդայներին համարում է վարձկաններ, իսկ մարդերի մասին որոշակի ոչինչ չի ասում¹⁵: Դեռևս Գ. Հյուբշմանը ենթադրում էր, որ «վարձկաններ» բառը վերաբերում է միայն խալդայներին¹⁶: Մենք նույնպես հակված ենք ենթադրելու, որ վարձկան եղել են միայն խալդայները հետևյալ նկատառումներով. 1) Հայաստանը առանձին սատրապություն էր, և հայերը պարտավոր էին զորք տրամադրել սատրապին, տվյալ դեպքում Օրոնտասին:

Յետևաբար, նրանք չէին կարող վարձկաններ լինել: 2) Շարունակության մեջ Քսենոփոնը նշում է, որ «խալդայներն ազատ էին»: Յետևաբար, նրանք պարտավոր չէին ծառայել պարսկական բանակում: Այս հանգամանքը Քսենոփոնը նշում է մեկ անգամ ևս, թե «եվ կարողութունն ու տաղանդն ու խալդայներին, թեև նրանք արքայի հպատակները չէին համարվում... մենք թշնամաբար վերաբերվեցինք»¹⁷: Ինչ վերաբերում է մարդերի իրանական ցեղին, ապա, հավանաբար, այդ ցեղը նույնպես պարտավոր էր ծառայելու արքայից արքայի բանակում:

5. Մեզ չի գոհացնում *παρά* նախդիրի թարգմանությունը «Անաբասիսի» հետևյալ հատվածում. «Μετά τοῦτο ἐπορεύ θῆσαν ἐπτά σταθμούς...παρά τόν Φάσιν πόταμον (Այնուհետև առաջ գնացին յոթ կայան... Փասիս գետի մոտ)»¹⁸: Բնագրի *παρά* նախդիրը մենք թարգմանել ենք «մոտ», մինչդեռ Մ.Ի.Մաքսիմովան¹⁹ թարգմանել է՝ «մինչև». Յ.Յ.Մանանդյանը՝ «երկարությամբ»²⁰, իսկ Կ.Բրաունսոնը՝ «դեպի»²¹: Եվ դա միանգամայն բացատրելի է: Բանն այն է, որ այդ նախդիրն ունի բազմաթիվ նշանակություններ և զործածվում է տարբեր հոլովների հետ: Այսպես, *παρά*+սեռական հոլով նշանակում է «կողմից, կողքին, շուրջ», *παρά*+տրական նշանակում է «հետ, կից, հանդեպ, ընթացքում», *παρά*+հայցական նշանակում է «դեպի, մոտ, կողքով, երկարությամբ, ընթացքում, պահին, հանդերձ, բացի»: Յ.Յ.Մանանդյանի թարգմանությունը («Փասիս գետի երկարությամբ») բառացի ճիշտ լինելով հանդերձ, մեր կարծիքով, չի բխում ամբողջ համատեքստից, որտեղ չի ասված, թե հելլենները նախապես հասել էին գետի եզրերը, որից հետո միայն նրանք ստիպված կլինեին գնալ գետի երկարությամբ: Այս թարգմանության հիման վրա Յ.Մանանդյանը փորձել է վերանայել 10 հազար հելլենների նահանջի երթուղին և որոշել Գյունմիս քաղաքի տեղը²²:

6. Ստրաբոնի «Աշխարհագրություն» երկի XII գլխի հատվածներից մեկում կարդում ենք. «Τὰ μὲν οὖν Κόμανα εὐάνδρῃ καὶ ἔστιν ἐμπόριον τοῖς ἀπὸ τῆς Ἀρμενίας ἀξιόλογον»²³: Այս նախադասության մեջ հոգնակի տրականով դրված *τοῖς* հոդը կանգնած է առանց գոյականի: Այն կարելի է ընդունել երկակի՝ ինչպես արական սեռի, այնպես էլ չեզոք սեռի հոդ: Ստրաբոնի թարգմանիչներն այն ընդունել են որպես չեզոք սեռի, և թարգմանել այսպես. «Կոմանան լավ է բնակեցված և հանդիսանում է Յայաստանից բերված ապրանքների նշանակալից կենտրոն»²⁴:

Տվյալ հատվածում *τοῖς* հոդը մենք ընկալում ենք որպես արական սեռի և այդ նախադասությունը թարգմանում ենք այսպես. «Կոմանան լավ է բնակեցված և հանդիսանում է Յայաստանից եկած վաճառականների առևտրական կենտրոն»: Նկատելի է, որ եթե առաջին թարգմանության համաձայն Կոմանան ներկայանում է որպես Յայաստանից բերված ապրանքների կենտրոն, ապա մեր առաջարկած թարգմանության համաձայն այդ քաղաքը հանդիսանում է հայ առևտրականների կենտրոն: Նշենք, որ այս հատվածը ճիշտ է թարգմանել նաև Գ.Ա. Ստրատանովսկին²⁵:

7. Ք.ա. II դ. սկզբին Յայկական թագավորության վերականգնման և հայկական գահին Արտաշեսյան արքայատոհմի վերահաստատման մասին պատմող գլխավոր սկզբնաղբյուրը Ստրաբոնի «Աշխարհագրության» հետևյալ հատվածն է, որի ցարդ կատարված թարգմանությունները չի կարելի գոհացուցիչ համարել. «Ἴστοροῦσι δὲ τὴν Ἀρμενίαν μικρὰν πρότερον οὖσαν ἀξιοθῆναι διὰ τῶν περὶ Ἀρταξίαν καὶ Ζαριάδριν, οἱ πρότερον μὲν ἦσαν Ἀντιόχου τοῦ μεγάλου στρατηγοὶ βασιλεύσαντες δ' ὕστερον μετὰ τὴν ἐκείνου ἦτταν ὁ μὲν τῆς Σωφηνῆς καὶ τῆς Ἀκισγνῆς καὶ Ὀδομαντίδος καὶ ἄλλων τινῶν, ὁ δὲ τῆς περὶ Ἀρτάξατα»²⁶ հատվածի թարգմանություններում ստացվել է այնպես, որ իբր Արտաշեսը թագավորել է Ծոփքում, իսկ Ջարիադրիսը՝ Արտաշատում: Նման թարգմանությունը քերականորեն կարող է առարկության չհամ-

դիպել, սակայն պատմական այլ տվյալներ, ինչպես նաև նույն Ատրաբոնի հետագա հաղորդումները հակառակ պատկերն են տալիս, այն է՝ որ Արտաշեսը թագավորել է Արտաշատում, իսկ Ջարիադրիսը՝ Ծոփքում: Յետևաբար, ὁ μὲν... ὁ δὲ կապը չի կարելի թարգմանել «առաջինը (այսինքն՝ Արտաշեսը)...իսկ երկրորդը» (այսինքն՝ Ջարիադրիսը)²⁷, կամ «մեկը (այսինքն՝ Արտաշեսը) ... իսկ մյուսը» (այսինքն՝ Ջարիադրիսը)²⁸: Ճիշտ թարգմանությունը կլինի՝ «այս մեկը ... իսկ այն մյուսը», որով «այս մեկը վերաբերում է Ջարիադրիսին, իսկ «այն մյուսը» Արտաշեսին: Այսպիսով՝ ստացվում է պատմական իրականությանը համապատասխանող ճիշտ թարգմանություն, թե Արտաշեսը թագավորել է Արտաշատում, իսկ Ջարիադրիսը Ծոփքում:

8. Նշված հատվածում, նկարագրելով հայկական էթնոսով բնակեցված մարգերի՝ հայկական միացյալ թագավորության կազմում ընդգրկվելու գործընթացը, Ատրաբոնն իր պատումն ավարտում է «ὥστε πάντας ὁμογλώττους εἶναι» խորհմաստ արտահայտությամբ, որը թարգմանել են հետևյալ կերպ, «այնպես, որ բոլոր ժողովուրդները այժմ խոսում են մեկ լեզվով»²⁹, կամ «ուստի բոլոր ազգությունները այժմ խոսում են մեկ լեզվով»³⁰, կամ «այնպես, որ բոլորը միալեզու (համալեզու) դարձան»³¹: Մեզ առավել ճիշտ է թվում այս վերջին թարգմանությունը, որտեղ հույժ կարևոր նշանակություն ունի «միալեզու (համալեզու) դարձան - ὁμογλώττους εἶναι» արտահայտությունը: Այն ճիշտ պատկերացնելու համար դարձյալ դիմենք Ատրաբոնին:

Պատմելով հարևան Աղվանքը բնակեցրած 26 ցեղերի մասին, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր լեզուն, Ստրաբոնը չի գործածում «ցեղ» կամ «ժողովուրդ» կամ «թագավորություն» նշանակող որևէ բառ, այլ ուղղակի գրում է. «...նախկինում ամեն մի լեզուն ուներ իր թագավորը, իսկ լեզուները քսանվեցն էին»³²: Կասկածից վեր է, որ այս դեպքում Ատրաբոնի մոտ «լեզու» (γλώττα) եզրը համանիշ է էթնիկական միավորի հասկացության: Նկատենք, որ նույնպիսի առումով է օգտագործում նաև «խոսք» բառը Մովսես Խորենացին իր մատյանի հետևյալ հատվածներում.

«Քանզի այս Բագարատ նախածեռն ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ յառաջ քան զպատերազմունսն Արշակայ ընդ Մակեդոնացիսն, և սա ի դրան արքունի: Իսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ, իշխան բիրոց և հազարաց յարևմտից կուսէ»³³: «Եւ յարևելից կողմանէ, զեզերք հայկական խօսիցս, կողմնակալս բիրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, Սիսակեանսդ և որ ի Կաղմեայ տանէն...»³⁴:

Աղվանքի ցեղերին վերաբերող Ստրաբոնի վերոհիշյալ հաղորդման, ինչպես նաև Խորենացու վկայությունների ուշադիր քննարկումից հետո դժվար չէ եզրակացնել, թե «միալեզու դարձան» ասելով հույն աշխարհագետը հասկանում է այն, որ բոլորը արդեն դարձան մի ժողովուրդ: Յետևաբար, կարելի է վստահ ասել, որ հայ ժողովրդի կազմավորման երկարատև գործընթացն արդեն իր ավարտին էր հասել Արտաշեսի և Ջարիադրիսի թագավորության ժամանակ:

Գրականություն

1 *Herodoti Historiae*, 1, 194.

2 Յ.Յ.Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, 1944, Երևան, էջ 58-60:

3 Μεγάλη Ἑλληνική Ἐγκυκλοπαιδεία, Πυρσός, σ. VII, 273.

4 *Homeri Ilias*, X, 133; *Odys.*, XIV, 500.

5 *Xenoph.*, *Anabasis*, I, 2, 16; *Cyropaidia*, VII, 1,2.

6 *Չ.Ս. Ղաւարշաւ*, Թեյշեբաիհի գինու կարասները, ՊԲԳ, 1959, թ.4, էջ 219:

7 *Strabo*, II, 1, 14; XI, 7, 2.

8 *Herodot.*, VII, 73.

9 Μεγάλη Ἑλληνική Ἐγκυκλοπαιδεία Π.Δοανδάκη, τ. IV, Ἀθήναι “Ἀλφάβητος” բառի տակ,

- էջ 108-111, աղյուսակ 1 և 4:
- 10 *Хенорх.*, Anabasis, IV, 3, 4.
- 11 Մանրամասն տե՛ս *Ս.Ս. Կրկյաշարյան*, Երվանդունի արքայատոհմը Հայաստանում, ՊԲՀ, 1973, ք. 4:
- 12 *Хенорх.*, Anabasis, ibid.
- 13 *Ксенофонт*, Анабасис, Л., 1951, с. 102.
- 14 *J. Markwart*, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919, S. 24; *Г.А. Тирациян*, Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии, ՊԲՀ, 1972, ք. 2, էջ 110-111:
- 15 *Հ.Հ.Սանանդյան*, նշվ. աշխ., էջ 68-69:
- 16 *H. Hübschman*, Die Altarmenischen Ortsnamen, Strassburg, S. 190, 207.
- 17 *Хенорх.*, Anabasis, V, V, 17; *Քսենոփոն*, Անաբասիս (թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 122:
- 18 *Хенорх.*, Anabasis, IV, VI, 4; *Քսենոփոն*, Անաբասիս, էջ 99:
- 19 *Ксенофонт*, Анабасис, (пер. М.И. Максимовой), с. 114.
- 20 *Հ.Հ.Սանանդյան*, նշվ.աշխ., էջ 392:
- 21 *Хенорх.*, Anabasis, (Loeb classical Library) p. 57.
- 22 *Հ.Հ.Սանանդյան*, նշվ.աշխ., էջ 64:
- 23 *Strabo*, XII, 3, 36.
- 24 *Ստրաբոն*, թարգմ. և ծանոթ. Հ.Աճառյանի, Երևան, 1940, էջ 55: *Я.А. Манандян*, О торговле и городах Армении, в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 105.
- 25 *Страбон*, География, перевод Г.А. Стратановского, Л., 1964, с. 524.
- 26 *Strabo*, XI, 14, 5.
- 27 *В.В. Латышев*, Известия древних писателей греческих и латынских о Скифии и Кавказе, т. 1, СПб, 1890, с. 155; *Страбон*, География, перевод Г.А. Стратановского, с. 478.
- 28 *Ստրաբոն*, թարգմ. Հ.Աճառյանն, էջ 57: *Հ.Հ. Սանանդյան*, նշվ.աշխ., էջ 116:
- 29 *В.В. Латышев*, նշվ. աշխ., էջ 155:
- 30 *Страбон*, էջ 498:
- 31 *Ստրաբոն*, թարգմ. Հ.Աճառյանի, էջ 57: Հ.Սանանդյան, նշվ.աշխ., էջ 116:
- 32 *Strabo*, XI, 4, 6.
- 33 *Ս. Խորենացի*, Բ, Գ:
- 34 *Ս. Խորենացի*, Բ, Ը: